Սիրում եմ քեզ… (ծածկանունը՝ ԷԱԿ-իկ)

Նորից կռիվ…Նորից վեճ….Նորից անիմաստ թեմա…

Չկա ճիշտ ու չկա սխալ… Ամենքս մեր կարծիքին ենք…Դու քոնն ես պնդում… Ասում ես, որ չեմ մեծանում... Իսկ ես ինձ մեծ եմ համարում, երբեմն նույնիսկ քեզ կոպտում…

Դու լռում ես… ես նույնպես… Հասկանում ենք, որ մի բան էլ կարելի էր չասել… Ուշ է... Դու ինձնից ես վիրավորված, ես՝ քեզնից…

Ասում ես, որ էլ չես խառնվի, բայց գիտեմ, որ չես դիմանա… Իսկ ես՞... Ես ունենալու եմ քո կարիքը ինչպես միշտ, բայց լռելու եմ, գիտեմ, որ չես հասկանա…Չէ՛, կհասկանաս: Չէ՞ որ դու էլ ես եղել իմ տարիքում… Բայց չես ընդունի… Մեծացել ես… Կիմանաս, որ սխալեմ, բայց չես կարողանա բացատրել…Միևնույն է, չեմ ընդունի...

Նորից վեճ…Դու քոնը կպնդես, ես՝ իմը…Կասես, որ միայն քո տարիքում քեզ կհասկանամ ու կշրջվես…

Կանցնի օր, հետո մյուսը: Դու կլռես…Ես նույնպես…Կհասկանանք, որ պետք չէր, չարժեր… Չէ՞ որ մեկ անգամ ենք ապրում…

Մի օր կարթնանամ ու կժպտամ քեզ…Դու դեռ վիրավորված ես…Ես երիտասարդ եմ՝ շուտ եմ մոռանում… Կգրկեմ քեզ, կխնդրեմ, որ մոռանանք…Դու կլռես… Կասես՝ էլի՞: Շաբաթը մեկ նույն պատմությունը, նույն խոսքերը, անիմաստ վեճերն ու կռիվները…Ես կասեմ, որ այս անգամ վերջինն էր…Դու կժպտաս… Գիտես, որ մեկ շաբաթից նույնն է լինելու… Կժպտամ նաև ես… Չէ՞ որ այս ամենը ես ասել էի անցած շաբաթ ու գիտեմ, որ շաբաթներ շարունակ ասելու եմ դեռ… Ես էլի սխալվելու եմ…Դու փորձելու ես ուղղել… Ես վանելու եմ, դու նորից վիրավորվես…

Հետո նորից… Ախր, ես դեռ մեծանում եմ…Դեռ փորձում եմ ապրել… Դու մեծացել ես, թող ես էլ վայելեմ…Դու տխրում ես, հասկանում, որ ոչինչ էլ չեմ հասկանում, բայց լռում ես՝ փորձելով չխառնվել: Հետո նորից չես դիմանում:

Նորից կռիվ… Նորից մի անիմաստ վեճ…

Հետո դու լուռ ես… Ես նույնպես…

Բայց, մա՛մ, հիշիր՝

ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ:

……